

որոյ եւ չտայր թոյլ առն եւ ոչ ժամ մի հեռանալ յիւրմէ, այլ ի տուէ եւ ի գիշերի մաւտ ունէր առ իւր բազում յարգանաւք եւ սիրով. եւ հաւատայր<sup>2</sup> նմա զխորհուրդ թագաւորին եւ զպէտս գործոյն՝ յոր երթայր. վասն զի ըստ յառաջագոյն ասացելոցն, Աստուած էր որ տնտեսէր զիրսն ըստ իւրոց կամացն, ի քակտումն եւ յամաւթ դասու<sup>3</sup> անաւրինացն, եւ յաւգուտ եւ ի փառս եկեղեցւոյ իւրոյ սրբոյ: *10* Եւ կատարէր բանն<sup>4</sup> սուրբ Յոգւոյն որ ասէր, թէ *Խորհեցան, եւ ոչ ինեւ, եւ դաշինս կռեցին, եւ ոչ իմով բանիւ*<sup>ա</sup>. եւ սաղմոսերգն ասէ. *Խորհեցան խորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել*<sup>բ</sup>:

*11* Ապա պատճառէր երանելի Խուժիկն պէտս ինչ զիւր տեսանել այլուր, եւ ինդրէր աղաչելով հրաժեշտ ի Վեհդէնշապիոյ. որով յամենայն<sup>5</sup> աւգտակար իրաց<sup>6</sup> եւ կարծեաց հեռացուցեալ զմիտս ամբարակապետին՝ առաւել հաւատարմագոյն ցուցանէր նմա զինքն, զիտելով յագդեցութենէ սուրբ Յոգւոյն, եթէ ոչ տայ թոյլ<sup>7</sup> Աստուած արձակել զնա նմա: *12* Իսկ Վեհդէնշապուհ եւ բնաւ իսկ ոչ առնոյր յանձն՝ լսել բանից խուժիկն, այլ ասէր ցնա գաղտ, եթէ «Դու որ աւրինաւք մտեալ ես եւ կէաս ի փառս կրակաց, ո՞չ կաս առ իս յաւժարութեամբ եւ տեսանես զկորուստ անաւրէն կրակասպան մահապարտացն, եւ ուրախանաս»: *13* Եւ երանելոյ Խուժիկն լուեալ զայնպիսի բանս յամբարապետէն՝ մեծաւ երկրպագութեամբ շնորհ ունէր սիրոյն Վեհդէնշապիոյ. այլ ի սրտի իւրում փառս տալով աւրինէր զամենագաւրն եւ զյարդարիչն ամենայնի զԱստուած, որ տայրն իսաւել ամբարակապետին եւ աղաչել զգուշակ նշխարացն սրբոցն՝ երթալ ընդ նոսա ի տեղի նահատակացն Աստուծոյ. այն որ լինելոց էր ցրիչ եւ խայտառակիչ թագաւորին հրամանի, եւ ցուցակ եւ բաշխիչ մեծի եւ երկնաւոր գանձու սրբոցն:

*14* Իսկ երանելոյ Խուժիկն համբարձեալ առ տէր Աստուած զաղաւթս սրտի իւրոյ՝ ինդրէր ի բարձրելոյն շնորհել նմա ուշ եւ լայնութիւն սրտի, որով արժանի լիցի գրել հաւաստեալ ի տախտակս մտաց իւրոց, որպէս յարձանագրի, զամենայն հարցմունս բռնաւորացն եւ զպատասխանիսն եւ զաղաւթսն, զոր իւրաքանչիւր ոք ի սրբոցն<sup>8</sup> ի ժամ կատարմանն մատուցանէր Աստուծոյ. որպէս զի պատմել ճշմարտապէս կարացէ ի կարգի առ ի յի-

1 Ձ. չտայ թոյլ... ի գիշեր

2 Ատ. եւ սիրով հաւատայր

3 ՏՏ. չիք դասու

4 Ատ. զբան

ա Ես. Լ 1

բ Սաղմ. Ի 12

5 Ձ. ամենայն

6 «յամենայն օգտակար իրաց» աղաւաղուած է թւում

7 Ատ. եթէ տայ թոյլ. ԲԳտ. ուղղագրել էին չտայ. այսպէս ըստ Ձ.

8 ՏՏ. ոք սրբոցն